

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N° «ՇՄՆ-ԲՄ-ԱՇՁԲ-19/01»**

ք.Երևան

« 02 » « 09 » 2019թ.

Շրջակա միջավայրի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի ժ/պ Վ.Ջիլավյանի, որը գործում նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հարությունյան Շին» ՍՊԸ-ն, ի դեմս Վ.Հարությունյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին Պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

- 1.1. Կապալառուն պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել Պայմանագրի Հավելված N°1-ով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:
- 1.2. Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան: Պայմանագրով նախատեսված Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքների կատարման նպատակով անտառահատման տոմսերի կամ սանիտարական և խնամքի հատման թույլտվություն տրամադրելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Պատվիրատուի իրավական ակտով կամ հանձնարարականով:
- 1.3. Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 2021 թվականի դեկտեմբերի 5-ը: Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N°2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

- 2.1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի 25-ի «ՀՀ 2012 թվականի դեկտեմբերի 20-ի N 1616-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու և Սևանա լճի անտառտնկարկների մաքրման առանձին գործողությունների նորմաները հաստատելու մասին» N 809-Ն որոշումը՝ պայմանագրի գործողության ընթացքում աշխատանքների կատարման որակի բարելավման և ինքնարժեքի իջեցման նպատակով, Պատվիրատուն ձեռնարկում է միջոցներ, որպեսզի Կապալառուին տրամադրվի «Վոթերմաստեր Կլասիկ III» ինքնագնաց բազմաֆունկցիոնալ էքսկավատորը և դրան կցվող սարքավորումները (այսուհետև՝ Գույք):
- 2.2. Պայմանագրի 2.1 կետով նախատեսված Գույքի օգտագործման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Գույքը տնօրինողի և Կապալառուի միջև կնքվող առանձին պայմանագրով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի 25-ի «ՀՀ 2012 թվականի դեկտեմբերի 20-ի N 1616-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու և Սևանա լճի անտառտնկարկների մաքրման առանձին գործողությունների նորմաները հաստատելու մասին» N 809-Ն որոշմամբ սահմանված կատարման ենթակա աշխատանքների ծավալները:
- 2.3. Աշխատանքների ամբողջ ծավալի կատարման համար Կապալառուն ապահովում է պահանջվող տեխնիկական մյուս միջոցները և աշխատանքների պատշաճ իրականացման համար նյութերը:
- 2.4. Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

- 3.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:
- 3.1.2. Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

- 3.1.3. Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:
- 3.1.4. Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.
- ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,
 - բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),
 - գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,
 - դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.
- 3.1.5. Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:
- 3.1.6. Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.
- 3.1.7. Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

- 3.2.1. Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.
- 3.2.2. Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.
- 3.2.3. Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.
- 3.2.4. Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:
- 3.2.5. Ձեռնարկել միջոցներ Պայմանագրի 2.1 կետով նախատեսված Գույքը Կապալառուին տրամադրման համար:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

- 3.3.1. Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:
- 3.3.2. Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:
- 3.3.3. Պատվիրատուից պահանջել ձեռնարկելու համապատասխան միջոցներ Պայմանագրի 2.1 կետով նախատեսված Գույքն իրեն տրամադրելու համար:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

- 3.4.1. Աշխատանքներն ամբողջությամբ կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:
- 3.4.2. Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:
- 3.4.3. Պայմանագրով նախատեսված մաքրման աշխատանքների արդյունքում գոյացած փայտանյութը (շինափայտ, վառելափայտ, քափ) կատարողը հանձնում է «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին՝ նրա հետ հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա:
- 3.4.4. Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

- 3.4.5. Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:
- 3.4.6. Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուին պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:
- 3.4.7. Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուին պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:
- 3.4.8. Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

- 4.1. Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:
- Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուին Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված №4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված №4): Ընդ որում Կապալառուին հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):
- 4.2. Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:
- 4.3. Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:
- 4.4. Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:
- 4.5. Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուին պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:
- 4.6. Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝
- 1) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի կողմից ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

- 2) Կապալառուի կողմից կատարված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ ընդունող հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:
- 3) մինչև ավարտված աշխատանքների ընդունումը՝ ընդունող հանձնաժողովը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված աշխատանքները և կազմում ակտ:
- 4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է կատարված աշխատանքների համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝
 - ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունը,
 - բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:
- 5) մինչև Պայմանագրի 4.6 կետի 4-րդ ենթակետով սահմանված կարգով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

- 5.1. Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **527 899 200 (հինգ հարյուր քսանյոթ միլիոն ութ հարյուր ինսունինը հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, որից 87 983 200 (ութսունյոթ միլիոն ինը հարյուր ութսուներեք հազար երկու հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

 - 2019 թվականի համար՝ 112 375 756 (մեկ հարյուր տասներկու միլիոն երեք հարյուր յոթանասունհինգ հազար յոթ հարյուր հիսունվեց) ՀՀ դրամ՝ որից 18 729 293 (տասնութե միլիոն յոթ հարյուր քսանինը հազար երկու հարյուր ինսուներեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն,
 - 2020 թվականի համար՝ 203 563 173 (երկու հարյուր երեք միլիոն հինգ հարյուր վաթսուներեք հազար հարյուր յոթանասուներեք) ՀՀ դրամ՝ որից 33 927 195 (երեսուներեք միլիոն ինը հարյուր քսանյոթ հազար հարյուր ինսունհինգ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն,
 - 2021 թվականի համար՝ 211 960 271 (երկու հարյուր տասնմեկ միլիոն ինը հարյուր վաթսուն հազար երկու հարյուր յոթանասունմեկ) ՀՀ դրամ՝ որից 35 326 712 (երեսունհինգ միլիոն երեք հարյուր քսանվեց հազար յոթ հարյուր տասներկու) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:**
- 5.2. Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:
- 5.3. Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (Հավելված N°3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:
- 5.3.1. Պայմանագրի 8.15 կետով նախատեսված ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ յուրաքանչյուր տարվա աշխատանքների կատարման համար կնքված համաձայնագրով նախատեսվող վճարման ժամանակացույցով:
- 5.4. Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝
 - ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված համապատասխան տարվա գինն է.
 - ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.
 - ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ – ն նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

- 6.1. Կապալառուին պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և Պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:
- 6.2. Պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:
- 6.3. Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված պայմանագրի շրջանակներում տուգանքը հաշվարկվում է կնքված համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:
- 6.4. Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը Պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:
- 6.5. Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:
- 6.6. Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:
- 6.7. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 6.8. Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

- 8.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:
Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:
- 8.2. Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:
- 8.3. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուին ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը

չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4. Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6. Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7. Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8. Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:


8.9. Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11. Պայմանագիրը կազմված է 7 (յոթ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի Հավելվածներ N№1; 2; 3; 4 և 4.1-ը համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12. Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13. Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն



նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի № 526-Ն որոշման №1 հավելվածի 32-րդ կետի 18-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Շրջակա միջավայրի նախարարություն

ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք

ՖՆ գործառնական վարչություն

ՀՀ 900011007763

ՀՎՀՀ 02507198

Շրջակա միջավայրի նախարարության

գլխավոր քարտուղարի ժ/պ

Վ.Ջիլավյան

(ստորագրություն)

Վ.Տ.



ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Հարությունյան Շին» ՍՊԸ

ք.Երևան, Գեղեցնի 9

«Արդշինբանկ» ՓԲԸ

ՀՀ 2470103800010000

ՀՎՀՀ 01012067

«Հարությունյան Շին» ՍՊԸ-ի

տնօրեն

Վ.Հարությունյան

(ստորագրություն)

Վ.Տ.



(Handwritten signatures)


ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Շրջակա միջավայրի նախարարություն
գլխավոր քարտուղարի ժ/պ

Վ.Զիլավյան

(ստորագրություն)

Կ.Տ.




ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Հարությունյան Շին. ԳԻԸ»
տնօրեն

Վ. Հարությունյան

(ստորագրություն)

Կ.Տ.



ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

2019-2021 թվականների ժամանակահատվածի Սևանա¹ լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքների կատարման (ժամանակացույց, քարտեզները² և ծավալաթերթեր)

Մասնաճյուղ	Տեղամաս	Աշխատանքի կատարման տարեթիվը	Մաքրման ենթակա տարածքի չափսը (հա)
Վարդենիս			257.0
	Ծովակ 1	2019	98.0
	Ծովակ 2	2020	30.0
	Վարդենիս	2020	129.0
Վարդենիկ			69.0
	Վարդենիկ	2020	37.0
	Ծովինար	2020	32.0
Մարտունի			132.0
	Մարտունի	2020	43.0
	Երանոս	2021	89.0
Արևիկ			26.0
	Փամբակ	2021	4.0
	Արեգունի	2021	22.0
Արտանիշ			42.0
	Արտանիշ	2021	18.0
	Դրախտիկ 1	2021	10.5
	Դրախտիկ 2	2021	13.5
Նորատուս			199.0
	Հայրիվանք	2021	82.0
	Նորատուս	2021	117.0
Սևան			25.0
	Սևան	2021	13.0
	Ախթամար	2021	12.0
Ընդամենը			750.0

¹ Կապալառուն աշխատանքները կատարում է Գեղարքունիքի մարզ, «Սևան» ազգային պարկ հասցեում:

² Քարտեզ-սխեմաներում նախատեսված խտրաձածկ տարածքները պայմանագրի շրջանակներում մաքրման ենթակա չեն:


Ծավալաթերթ
Սևանա լճի շրջակա ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքների

(հազար դրամ)

ՀՀ	Աշխատանքի և ծառայության անվանումը	Չափման միավորը	Ծավալը	Միավորի գինը	Ընդամենը
Վարդենիսի մասնաճյուղի Ծովակի տեղամաս					
1	Ջրի մեջ նախկին տարիներին հատված կոճղերի և առանձին թփերի արմատախիլ անում WATERMASTER CLASSIC III տրակտորով /խորությունը 1մ-ից ավելի/ և բարձում ПТС-М ինքնագնաց լաստի վրա	հա	4.0	6.333	728.29
		խտխմ	60* (115)**		
	տեղափոխում ափ մինչև մեքենայի բարձման տեղը, միջին 400մետր հեռավորության վրա	խտխմ	115	10.580	1216.70
	Փայտանյութի, ջախի և արմատային զանգվածի դատարկում CAT 428E էքսկավատորով	խտխմ	115	0.800	92.00
	Փայտանյութի, ջախի և արմատների՝ փտած, նեխած զանգվածի հետ միասին բարձում բեռնատար մեքենային CAT 428E էքսկավատորով	խտխմ	115	1.036	119.14
	Տեղափոխում 6 կմ հեռավորության վրա	խտխմ	115	0.868	99.80
	Ընդամենը			4.0	
2	Հահճացած տարածքում և ջրի մեջ /խորությունը մինչև 1 մ/ ծառերի, թփերի և հատված կոճղերի արմատախիլ անում T-170 ճահճազնաց տրակտորով և արմատների՝ փթած, նեխած հողախառնուրդի հետ միասին հրում մինչև մեքենայի բարձման տեղը, միջին 250հեռավորության վրա/2660x2+300խմ կոճղ/	հա	94.0	10.530	59178.60
		խտխմ	2660* (5620)**		
	Անտառանյութի մասնատում	խտխմ	2000	1.598	3196.00
	արմատային զանգվածի բարձում CAT 428E էքսկավատորով	խտխմ	5620	1.037	5828.66
	Տեղափոխում 5 կմ հեռավորության վրա	խտխմ	5620	0.733	4119.46
	Ընդամենը			94.0	
Ընդամենը Ծովակի տեղամասում			98.0		74578.650
Ընդհանուրը Ծովակի տեղամասում			98.00		74578.65
Վերադիր ծախսեր		տոկոս	11.0		8203.65
Ընդամենը					82782.30
Շահույթ		տոկոս	11.0		9106.05
Ընդամենը					91888.35
Չնախատեսված ծախսեր		տոկոս	2.0		1837.77
Ընդամենը					93726.12
Ավելացված արժեքի հարկ		տոկոս	20.0		18745.22
Ընդամենը					112471.35

*վերգետնյա կենսազանգվածը

**վերգետնյա կենսազանգվածը և արմատային զանգվածը՝ տիղմի և հողախառնուրդի հետ միասին



Ծավալաթերթ
Սևանա լճի շրջակա ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքների


(հազար դրամ)

ՀՀ	Աշխատանքի և ծառայության անվանումը	Չափման միավորը	Ծավալը	Միավորի գինը	Ընդամենը
Վարդենիսի մասնաճյուղի Ծովակի տեղամաս					
1	Ճահճացած տարածքում և ջրի մեջ /խորությունը մինչև 1 մ/ ծառերի, թփերի և հատված կոճղերի արմատախիլ անում T-170 ճահճազնաց տրակտորով և արմատների՝ փթած, նեխած հողախառնուրդի հետ միասին հրում մինչև մեքենայի բարձման տեղը, միջին 250հեռավորության վրա/3360x2+400խմ կոճղ/	հա	27.0	10.530	15795.00
		խտխմ	700* (1500)**		
	Անտառանյութի մասնատում	խտխմ	200	1.615	323.00
	արմատային զանգվածի բարձում CAT 428E էքսկավատորով	խտխմ	1500	1.038	1557.00
	Տեղափոխում 4 կմ հեռավորության վրա	խտխմ	1500	0.733	1099.50
	Ընդամենը			27.0	
2	Ցամաք տարածքում տրակտորով ծառերի, թփերի և կոճղերի արմատախիլ անում 90խմX1,5+10խմ կոճղ/	հա	3.0	3.090	448.05
		խտխմ	90* (145)**		
	Անտառանյութի մասնատում	խտխմ	50	1.616	80.80
	Ծառերի և թփերի արմատների ու փթած, նեխած զանգվածի հողախառնուրդի հետ միասին բարձում բեռնատար մեքենային CAT 428E էքսկավատորով	խտխմ	145	1.037	150.37
	Տեղափոխում 4 կմ հեռավորության վրա	խտխմ	145	0.580	84.10
	Ընդամենը			3.0	
Ընդամենը Ծովակի տեղամասում			30.0		19537.82
Ընդհանուրը Ծովակի տեղամասում			30.00		19537.82
Վերադիր ծախսեր		տոկոս	11.0		2149.16
Ընդամենը					21686.98
Շահույթ		տոկոս	11.0		2385.57
Ընդամենը					24072.55
Չնախատեսված ծախսեր		տոկոս	2.0		481.45
Ընդամենը					24554.00
Ավելացված արժեքի հարկ		տոկոս	20.0		4910.80
Ընդամենը					29464.80

*վերգետնյա կենսազանգվածը

**վերգետնյա կենսազանգվածը և արմատային զանգվածը՝ տիղմի և հողախառնուրդի հետ միասին

552000 000000



Ծավալաթերթ
Սևանա լճի շրջակա ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքների

(հազար դրամ)

Վարդենիսի մասնաճյուղի Վարդենիս տեղամաս						
1	Ջրի մեջ նախկին տարիներին հատված կոճղերի և առանձին թփերի արմատախիլ անում WATERMASTER CLASSIC III տրակտորով /խորությունը 1մ-ից ավելի/ և բարձում ПТС-М ինքնագնաց լաստի վրա	հա	30.0	8.510	4808.10	
		խտխմ	350* (565)**			
	տեղափոխում ափ մինչև մեքենայի բարձման տեղը, միջին 400մետր հեռավորության վրա	խտխմ	565	10.580	5977.70	
	Անտառանյութի մասնատում	խտխմ	90	1.616	145.44	
	Փայտանյութի, ջախի և արմատային զանգվածի դատարկում CAT 428E էքսկավատորով	խտխմ	565	0.800	452.00	
	Փայտանյութի, ջախի և արմատների՝ փտած, նեխած զանգվածի հետ միասին բարձում բեռնատար մեքենային CAT 428E էքսկավատորով	խտխմ	565	1.036	585.34	
	Տեղափոխում 5 կմ հեռավորության վրա	խտխմ	565	0.730	412.45	
	Ընդամենը			30.0		12381.03
2	Ճահճացած տարածքում և ջրի մեջ /խորությունը մինչև 1 մ/ ծառերի, թփերի և կոճղերի արմատախիլ անում T-170 ճահճագնաց տրակտորով և արմատների՝ փթած, նեխած հողախառնուրդի հետ միասին հրում մինչև մեքենայի բարձման տեղը, միջին 250 հեռավորության վրա/2100x2+200խմ կոճղ/	հա	80.0	10.530	46332.00	
		խտխմ	2100* (4400)**			
	Անտառանյութի մասնատում	խտխմ	600	1.615	969.00	
	արմատային զանգվածի բարձում CAT 428E էքսկավատորով	խտխմ	4400	1.037	4562.80	
	Տեղափոխում 4 կմ հեռավորության վրա	խտխմ	4400	0.580	2552.00	
	Ընդամենը			80.0		54415.80
	3	Ցամաք տարածքում տրակտորով ծառերի, թփերի և կոճղերի արմատախիլ անում /480խմX1,5+40խմ կոճղ/	հա	19.0	3.090	2348.40
խտխմ			480* (760)**			
Անտառանյութի մասնատում		խտխմ	250	1.616	404.00	
Ծառերի և թփերի արմատների ու փթած, նեխած զանգվածի հողախառնուրդի հետ միասին բարձում բեռնատար մեքենային CAT 428E էքսկավատորով		խտխմ	760	1.037	788.11	
Տեղափոխում 4 կմ հեռավորության վրա		խտխմ	760	0.438	332.88	
Ընդամենը			19.0		3873.39	
Ընդամենը Վարդենիսի տեղամասում			129.0		70670.22	
Ընդհանուրը Վարդենիսի տեղամասում			129.00		70670.22	
Վերադիր ծախսեր		տոկոս	11.0		7773.72	
Ընդամենը					78443.94	
Շահույթ		տոկոս	11.0		8628.83	
Ընդամենը					87072.78	
Չնախատեսված ծախսեր		տոկոս	2.0		1741.46	
Ընդամենը					88814.23	
Ավելացված արժեքի հարկ		տոկոս	20.0		17762.85	
Ընդամենը					106577.08	

*վերգետնյա կենսազանգվածը

**վերգետնյա կենսազանգվածը և արմատային զանգվածը՝ տիղմի և հողախառնուրդի հետ միասին

4452000 000000

4449000 000000

552000 000000

556000 000000

4452000 000000


4449000 000000

552000 000000

556000 000000

Քարտեզ-սխեմա
«Սևան» ազգային պարկի
«Վարդենիս» մասնաճյուղի
«Վարդենիս» տեղամասում
նախատեսված
մաքրման աշխատանքների
մակերեսը՝ 139 հա

Մասշտաբ 1:25 000



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Մաքրման նախատեսված տարածքներ

- Մառաթփային բուսականություն 19 հա
- Խոտածածկ 10 հա
- Հահճապատ 80 հա
- Ջրածածկ 30 հա

1901,5 բարձրության նիշ

Ազգային պարկի քառակուսիների սահմաններ


Ծավալաթերթ
Սևանա լճի շրջակա ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքների

(հազար դրամ)

ՀՀ	Աշխատանքի և ծառայության անվանումը	Չափման միավորը	Ծավալը	Միավորի գինը	Ընդամենը	
Վարդենիկի մասնաճյուղի Վարդենիկի տեղամաս						
1	Ջրի մեջ թփերի, առանձին ծառերի, և նախկին տարիներին հատված կոճղերի արմատախիլ անում WATERMASTER CLASSIC III տրակտորով /խորությունը 1մ-ից ավելի/ և բարձում PTC-M ինքնագնաց լաստի վրա /30խմX1,5+10խմ կոճղ/	հա	2.0	8.510	468.05	
		խտխմ	30* (55)**			
	տեղափոխում ափ մինչև մեքենայի բարձման տեղը, միջին 300մետր հեռավորության վրա	խտխմ	55	7.920	435.60	
	Անտառանյութի մասնատում	խտխմ	10	1.615	16.15	
	Փայտանյութի, ջախի և արմատային զանգվածի դատարկում CAT 428E էքսկավատորով	խտխմ	55	0.800	44.01	
	Փայտանյութի, ջախի և արմատների՝ փտած, նեխած զանգվածի հետ միասին բարձում բեռնատար մեքենային CAT 428E էքսկավատորով	խտխմ	55	1.036	56.98	
	Տեղափոխում 5 կմ հեռավորության վրա	խտխմ	55	0.733	40.31	
	Ընդամենը			2.0		1061.10
